

Բուժական ծառայութիւններ

Ի՞նչ է բուժական ծառայութիւնը:

IHSS-ի համար բուժական ծառայութիւններ են այն ծառայութիւնները, որոնք նախքան մատուցուիլը բժշկական մասնագէտի մը կողմէ տրուած արտօնագիր և հմտութիւն կը պահանջեն:

Բուժական ծառայութեան քանի մը օրինակներ են.

- Դեղ տալը կամ սրսկումներ ընելը
- Արեան կամ մէզի քննութիւն
- Վերք խնամելը
- Քաթերի խնամք և խոռոչի լուացում
- Ախտահանուած դարմանումի որևէ խնամք
- Հոգնա, թուային խթանիչ կամ մոմիկներ մտցնելը
- Խողովակով կերակրելը
- Ներծծում

Ձեր նոր մատակարարին ըսէք, թէ ինչ կ'ակնկալէք:

Գործի ընդունուելու հարցազրոյցի ընթացքին, դուք պէտք է քննարկէք ձեզի համար լիազօրուած IHSS-ի բոլոր ծառայութիւնները, որոնց շարքին՝ բուժական այն ծառայութիւնները, որոնց համար ձեզի լիազօրած են IHSS-ի ժամեր: Կարգ մը մատակարարներ կրնան չնախընտրել մատուցելու անձնական խնամքի որոշ տեսակներ և/կամ բուժական ծառայութիւններ և չեն ուզեր կրել այդ տեսակ խնամքի հետ կապուած պատասխանատուութիւնը:


Ձեր մատակարարը պէտք է մարզուած ըլլայ բուժական ծառայութիւններ կատարելու:

IHSS-ի կանոնները կը պահանջեն, որ առողջապահական խնամքի արտօնագրուած մասնագէտ մը, ինչպէս բժիշկը պահանջէ և ղեկավարէ բուժական ծառայութիւնները: Ձեր բժիշկը բուժական ծառայութեան ձևը պէտք է լեցուցած ըլլայ, և դուք ալ պէտք է ստորագրէք այդ ձևը: Լեցուած ձևը պէտք է քաունթի մօտ ըլլայ նախքան ձեր մատակարարին այդ ծառայութիւններուն դիմաց վճարուիլը:

- Դուք պէտք է ձեր նոր մատակարարին համար կարգադրութիւններ ընէք, որ ձեր բժիշկը մարզէ զինք մատուցելու ձեզի հարկաւոր բուժական ծառայութիւնները՝ ներառեալ վտանգները: Եթէ դուք վստահ չէք, թէ ինչպէ՞ս մատուցուին ծառայութիւնները, ատոր համար դուք պէտք է հարցնէք ձեր բժիշկին:



- Դուք և ձեր մատակարարը պետք է նաև իմանաք բուժական ծառայութիւններ մատուցելու ընթացքին՝ արտակարգ վիճակի պարագային ձեր ընելիքը:
- Շատ կարևոր է, որ քանի ձեր մատակարարը արտօնագրուած առողջապահական մասնագէտի մը կողմէ համապատասխան մարզում Չէ ստացած, ձեզի համար որևէ բուժական ծառայութիւն Չմատուցէ:



Բաներ, որ պետք է յիշեք.



Միշտ վստահ եղեք, որ նախքան որևէ բուժական ծառայութիւն կատարելը ձեր մատակարարը իր ձեռքերը լուայ և ձեռնոցները հագնի: Ասով ապահոված կ'ըլլաք ձեր և ձեր մատակարարին առողջութիւնը:



Բուժական ծառայութիւններու պետքը կրնայ փոխուիլ աւելի յաճախ քան ուրիշ ծառայութիւններ: Եթէ ձեր պետքերը փոխուին, դուք պետք է կապ պահէք ձեր ընկերային ծառայողին հետ, որպէսզի ան կարենայ բուժական պահանջի նոր ձև խնդրել ձեր բժիշկէն:



Ձեր մատակարարը կրնայ նաև պետք ունենալ ստանալու ձեր բժիշկի պահանջած յաւելեալ բուժական նոր մարզումները: